

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 24

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

27.11.2017թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյան - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Դոխոյանը, Հ.Մկրտչյանը, Ս.Ասրյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյան - մարզպետի օգնական
- Տ. Էվինյան - մարզպետի օգնական

#### Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին /Ձեկ. Ն.Սարգսյան/
2. Ֆրանսիա կատարված այցի մասին /Ա.Նալբանդյան/
3. Գյուղական բնակավայրերում անավարտ բնակելի տների շինարարության մասին /Ձեկ. Լ.Ասլանյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին /Ձեկ. Հ.Պապոյան/
5. Մարզի արդյունաբերության իննամսյա արդյունքների մասին տեղեկատվություն /Ձեկ. Հ.Մկրտչյան/
6. Մարզի խոշորացված համայնքներում կատարվող ընթացիկ աշխատանքների մասին /Ձեկ. Դ.Մանուչարյան/
7. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին /Ձեկ. Գ. Հակոբյան/

Այլ հարցեր

## Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին և ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին`

Հսկողություն սահմանել խոշորացված համայնքների ՀՈԱԿ-ների հաստիքացուցակների հաստատման գործընթացի նկատմամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին` ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`

Անհրաժեշտ հսկողություն իրականացնել մարզի համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին`

Ուսումնասիրել և ձեռնարկել միջոցներ 2018թ. նախադպրոցական ուսումնական հաստատություններում Սմարթ սենյակներ կազմավորելու ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին`

Առաջարկություն ներկայացնել համայնքների ղեկավարներին համայնքների 2018թ. բյուջեներում նախատեսել միջոցներ նախադպրոցական ուսումնական հաստատություններում Սմարթ սենյակների կահավորման նպատակով:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ